

Թագաւորին, պատուական եւ վայելուչ կումարչ (կերպաս - Յ. Ք.) , որոց վերայ էանց Թագաւորն, եւ զնաց ի տունն Սօջայ Սաչիկին: Եւ ի տան անդր, Սօջայ Սաչիկին ոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ՝ մատոյց առաջի Թագաւորին. նոյնպէս եւ ամենայն մեծամեծքն Ջուղայու մատուցին ընծայ, որպէս վայել է Թագաւորի: Եւ զաւուրս երեք եկաց անդ Շահն, եւ Ջուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք եւ ծաղկեհամ զինեալ»<sup>2</sup>:

Դաւրիժեցի այսպէս առաջին անգամ Սօջայ Սաչիկը մեղի ներկայացնելէ ետք՝ ուրիշ տեղեկութիւն չի տար անոր մասին:

Սակայն, անհատի մը պատկանող Յայսմաւուրք մը մեղի կուտայ անդրազոյն ծանօթութիւններ Սօջայ Սաչիկի եւ անոր ընտանեկան պարագաներուն մասին: Գրիչէն մնացած զլիւաւոր յիշատակարանին մէջ կը կարդանք. «Արդ, այսպիսում լուսազարդ տառիս ցանկացաւդ եղեւ մեծաւ փափաքամբ պարոնաց պարոնն Սօջայ Սաչիկին, եւ մեք տեսաք զփափաք եւ զսէր ն(ո)ր(ա) զոր ունէր առ հոգեւորսն: Ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ յԵրուսաղէմ: Վասն այն յուսոյն եւ տ(է)րունական հրամանին, ետ գրել զտուրբ գիրքս՝ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնողացն՝ հօրն Մէլքումին եւ մօրն Շահրիխասին, եւ եղբարցն՝ Վաթանին եւ Սօջայ Բարային, եւ կողակցին՝ Մարիամին, եւ որդւոցն՝ պարոն Սաֆարին, Սօջայ Նազարին, Սինանին, զԼւանին, Բազումին, եւ քրեւերն՝ Սօլթանշահին, եւ թոռներացն՝ Մէլիք աղին եւ Ջալալին, Ֆուանկիւլին եւ Սուլթանին, եւ զստերացն՝ Եղիխասին եւ Ազատին, եւ հարսներացն՝ Սուլթանփաշին եւ Սաթունջանին, եւ եղբարցն կանանցն՝ Դաստաղուլին, Սուլթուլ Սաթունին, եւ մեծ պապուն Սօլթանբէկին, մեծ մամուն Ազատին, եւ եղբարց զստերացն՝ Իփարին եւ Սուլթային, Թութիկին եւ Մաղիկին. եւ մեր տատիկին, եւ ամենայն արեան մերձաւորացն, կենդանեացն եւ հանգուցելոցն. Ամէն»<sup>3</sup>:

2. Պատմութիւն ԱՌԱՔԵԼ ՎՐԴԻ ԴԱԻՐԻՓԵՑԻՈՅ, Գ. տպ. Վաղարշապատ, 1896, էջ 24-25:

3. Ահա՛ յիշատակարանը՝ իր ամբողջութեամբ, զոր առաջին անգամ ըլլալով՝ հոս կը հրատարակեմ. «Արդ՝ զայս լուեալ աստուածասէր եւ քրիստոսադաւան, աղքատասէր եւ հաւատարիմ Սօջայ Սաչիկին, փափաքէր այսմ լուսազարդ կտակիս եւ վարդափթիթ եւ անուշահոտ բուրաստանիս: Զոր պայծառ ջահքն եւ անաղօտ լապտերն տէր Գրիգորիս վկայասէրն, եւ տէր Ներսէս շատաշնորհն, եւ Կիրակոս անուն ոմն բանիբուն վարդապետ, հոգ տարան, յամենայն ազգաց ժողովեցին զպատմութիւն նահատակութեան սրբոց. զառաքելոց եւ զմարդարէից, զհայրապետացն եւ զվարդապետաց, զթագաւորաց եւ զզօրավարաց... Եւն...»:

«Արդ, այսպիսում լուսազարդ տառիս...» (կը տրուի այն մասը՝ զոր վերեւ ներկայացուցինք, եւ յետոյ կը շարունակուի). «Թողութիւն հայեցէք աս-